

նակէ, ըստ այնմ, Նոթ-ուր կամ Նահ-ուր՝ գրեթէ համազօր նախնի Հոռոմայեցիներուն Պարթիկ կոչումին՝ քիչ մը սեղմելով այս բառին քաղաքական լայնութիւնն և ի փոխարէն լայնելով անոր տանուտիրական առումը:

Ամիրայ բառը՝ մատենապէս չէ յիշուած հայերուն մէջ Մազիտարոսէն, Արծրունիէն, Ուռհայեցիէն առաջօրինակ. «Ազդ արար ամենայն մօտաւոր ամիրայցն», «Ո՛վ մահանունդ ամիրայական սերի յԱբրահամէ» Մոֆթ. Է. որով կըրնանք ըսել թէ հեղինակական այդ գաղափարէն շատ ետքը մտած է մեր մէջ մօրայ առումը:

Ամիրաներ ունեցած ենք մենք ալ, և անոնց անունը լծորդուած է՝ մանաւանդ թուրքահայերուն՝ պատմութեան հետ 1550էն առդին մինչև 1866 կամ 1870, մինչ մեռաւ ամիրաներուն իբրեւ վերջինն¹ ու Տիմահաթոն ալ — կարապետ ամիրայ Պալեան, արքունի մեծ հայ ճարտարագետը, Խալֆան:

Այսպէս՝ ի չգոյէ ժամանակակից ամիրայի՝ արդի սերունդը չէ տեսած ու չօշափած ամիրայ մը, չունի ամիրայութեան վրայ կայուն՝ այսինքն՝ գիրի առնուած գաղափար մը, ժողովածու գրաբառ պատմութենէ մը զատ, որ ամիրաներու էութեան և երանգին վրայ ոչինչ կըսէ իբրեւ պատմիչ: Ամիրաներուն անուններն ու գիրքը՝ նոր սերունդին երեւակայութեանը մէջ կը պատկերին, ազդեցութեամբ անհաւաստի զրոյցներու և ծայրայեղ կուսակցականութեանց մասնական պատմութեանցը՝ հոմերական հին արարածներուն կամ արաքական գիշերներու արուսյիկ պարիկներուն խօլ գիծերովը, այնչափ սիրած ենք եւրոպական հետեւակ երեւակայութեանց անիր վէպերն ու այնչափ անտարբեր Պեսցած ենք մերձաւոր անցեալին ու ժամանակակից պատմութեան:

1. Վասն զի իրմէն ետքը 1869ին վախճամած է ամիրապատիւ Տատեամ Յովհաննէս պէյը, արքունի վառօղապիտ ու բարերար Ազգ. հիւանդանոցին ու մատենագրական և դպրոցական ձեռնարկութեանց: